# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՄԱՆ

«25» «հոկտեմբերի» 2019թ. № 353-Հ

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿԵԲԵՐ ՔՎԱՐՑԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2019 թվականի սեպտեմբերի 26-ի ՈՀ/Ա-2019/177 գրությամբ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում արդյունաբերական նպատակով ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը և կից փաստաթղթերը, պարզվել է, որ Ընկերությունը նախատեսում է ջրառն իրականացնել Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի վարչական տարածքում Դարբ գետից 1244160 խորանարդ մետր տարեկան, 3456.0 խորանարդ մետր օրական, 40.0 լիտր վայրկյան ջրաքանակով, տարեկան 360 օր, 24 ժամյա ռեժիմով:

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ջրօգտագործման թույլտվությամբ հայցվող ջրաքանակն ստանալու նպատակով ջրօգտագործման և ջրահեռացման անհատական ընթացիկ նորմաներով ներկայացված ջրապահանջի հաշվարկները և համադրելով Դարբ գետից և դրա ջրհավաք ավազանից արդեն իսկ այլ ջրօգտագործողներին ջրօգտագործման թույլտվություններով տրամադրված ջրաքանակները, պարզվել է, որ Ընկերության կողմից նախատեսվող ջրառի կետից վերև՝ Դարբ գետից և դրա ջրհավաք ավազանում առկա են շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվություններ:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից 2019 թվականի հոկտեմբեր ամսին իրականացվել է ուսումնասիրություն Դարբ գետի՝ Ընկերության կողմից հայցվող ջրառի կետի գետահատվածքում գետային հոսքի փաստացի վիճակի վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերոհիշյալ կետում գետի փաստացի հոսքը չի գերազանցում հոկտեմբեր ամսվա համար հաշվարկված Դարբ գետի բնապահպանական թողքը, ինչը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N927-Ն որոշման պահանջների համաձայն հաշվարկված է 150 լիտր վայրկյան:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 5-րդ հոդվածի 24-րդ մասի՝ «էկոլոգիական թողքերի հաշվին ջրօգտագործողների պահանջների բավարարումն արգելվում է»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ջրօգտագործման թույլտվության հայտը մերժվում է, «եթե ջրային պաշարները բավարար չեն ջրօգտագործման թույլտվություն տալու համար, կամ պահանջվող ջրօգտագործման թույլտվությունը չի բավարարում ջրի ազգային պաշարի պահպանման պահանջները կամ ջրերի ստանդարտները»:

Հիմք ընդունելով այն, որ Դարբ գետի ազատ հոսքը բավարար չէ հայցվող ջրօգտագործման համար, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 5-րդ հոդվածի 24-րդ մասով, 30.1-րդ հոդվածի 2-րդ կետով, 31-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական տարածքում Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նպատակով «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի վարչական տարածքում Դարբ գետից 1244160 խորանարդ մետր տարեկան, 3456.0 խորանարդ մետր օրական, 40.0 լիտր վայրկյան ջրաքանակով տարեկան 360 օր 24 ժամյա ռեժիմով արդյունաբերական նպատակով ջրառ իրականացնելու համար ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում:

ՆԱԽԱՐԱՐ Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ

«25» հոկտեմբերի 2019թվական
ք. Երևան